

ՍԱՍՏԿԱՑՈՂ ՊԱՅՔԱՐ՝ ՆՈՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԴԵՄ

Posted on January 21, 2019 by Keghart



Category: [Opinions](#)



Կ'ականկալէինք որ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան խորհրդարանական ու վարչապետական դիրքերու կորուստը պիտի առաջնորդէր այլազան մեկնաբանութիւններու: Ներքոյիշեալ Բ. Տոլտագլեանի յօդուածը կը շոշափէ «օրէ օր սաստկացող պայքար»ի հաւանական հոլովոյթը: Կը ներկայացնենք նաեւ Հ. Մարգարեանի արտասանած **ճառը ՀՅԴ-ի 33-րդ ընդհանուր ժողովին ու անոր պատասխան Յ. Տէր Դաւիթեանի **խորհրդածութիւնները**: Խմբ.**

Բաֆֆի Տոլտագլեան, norkhosq.net, 24 Դեկտեմբեր 2018



Այլեւս յստակ է, որ Երեւանէն որոշ մարդիկ, քաղաքական վերապրումի իբրեւ միակ միջոց, համակարգուած, նախապատրաստուած եւ թունաւոր պայքարի կ'ուղղորդեն Սփիւռքեան կառոյցները՝ ներկայ իշխանութիւնները վարկաբեկելու բացայայտ միտումով: Եւ ի՞նչ է իշխանութիւններու դեմ գործածուող մեղադրանքները.

Կ'ականկալէինք որ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան խորհրդարանական ու վարչապետական դիրքերու կորուստը պիտի առաջնորդէր այլազան մեկնաբանութիւններու: Ներքոյիշեալ Բ. Տոլտագլեանի յօդուածը կը շոշափէ «օրէ օր սաստկացող պայքար»ի հաւանական հոլովոյթը: Կը ներկայացնենք նաեւ Հ. Մարգարեանի արտասանած **ճառը ՀՅԴ-ի 33-րդ ընդհանուր ժողովին ու անոր պատասխան Յ. Տէր Դաւիթեանի **խորհրդածութիւնները**: Խմբ.**

Բաֆֆի Տոլտագլեան, norkhosq.net, 24 Դեկտեմբեր 2018



Այլեւս յստակ է, որ Երեւանէն որոշ մարդիկ, քաղաքական վերապրումի իբրեւ միակ միջոց, համակարգուած, նախապատրաստուած եւ թունաւոր պայքարի կ'ուղղորդեն Սփիւռքեան կառոյցները՝ ներկայ իշխանութիւնները վարկաբեկելու բացայայտ միտումով: Եւ ի՞նչ է իշխանութիւններու դեմ գործածուող մեղադրանքները.

- 1. Ներկայ իշխանութիւնները Լեւոն Տէր Պետրոսեանի մարդիկն են: Եկած են յարուստի տալու ԼՏՊ-ի ծրագիրներուն:
- 2. Ներկայ իշխանութիւնները Սորոսի դրածոներն են: Արեւմտամետ են եւ ամերիկամետ: Եկած են քանդելու ազգային արժէքներն ու հայրենիքը:
- 3. Արդէն պարզ է, ուրեմն, որ ներկայ իշխանութիւնները Արցախը պիտի յանձնեն Ադրբեջանին եւ մեծ զիջումներ պիտի ընեն:

Բնական է, որ Եւ հայ մարդ, պիտի սարսափի այս բաները լսելով, մանաւանդ եթէ հեռաւոր վայրերու մէջ ապրելով՝ չի գիտեր հայաստանեան քաղաքական իրադարձութիւններու նրբերանգները:

Ապացոյցները որ կը բերուին, անցեալի հետ համեմատութիւններ են, ենթադրութիւններ, վերլուծութիւններ:

Ես անձամբ ոչ մէկ ապացոյց ունիմ հաւատալու կամ չհաւատալու վերի պնդումներուն: Բայց վերջին շրջապտոյտիս՝ Հիւսիսային Ամերիկայի եւ Միջին Արեւելքի քաղաքներ, տեսայ, թէ որոշ շրջանակներու մէջ ինչպէս բառացիօրէն կը կրկնուի նոյն յանկերգը՝ Լեւոն Տէր Պետրոսեանի մարդիկը, Արցախի յանձնումը, Ամերիկան:

Արդէն ես ամբողջութեամբ կորսնցուցած եմ յոյսս, որ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները նոր մակարդակի կրնան բարձրանալ: Ընդհակառակը, շուտով պիտի տեսնենք օրէ օր սաստկացող պայքար՝ նոր իշխանութիւններուն դէմ: Սուտն ու իրաւը, ճիշդն ու սխալը իրար պիտի խառնուին եւ ամէն միջոց ի գործ պիտի դրուի, փաստելու, որ «մենք ճիշդ էինք, Նիկոլը՝ սխալ: Մենք հերոս ենք, Նիկոլը՝ դաւաճան»:

Եւ միակողմանի պիտի չըլլայ այս յարձակումը: Նոր իշխանութիւնները պիտի հակադարձեն նոյնքան եւ ակելի ուժգին, ու պիտի այրին կամուրջները շատերու միջեւ, պիտի խզուին կապերը կողմերու միջեւ:

Յուսամ, որ սխալ եմ: Յուսամ, որ դեռ կ'անդրադառնանք, թէ ներազգային մթնոլորտը շիկացնելով ո'չ Հայաստանը, ոչ ալ հայ ժողովուրդը բան պիտի շահի:

Գիտեմ, հիմա շատեր պիտի ըսեն, որ միւսներն են մեղաւորը, իրենք սկսան, մեր դէմ պատերազմ հռչակեցին: Գիտեմ որ շատեր պիտի խարազանեն նաեւ զիս՝ այս գրառմանս համար:

Գիտեմ այս բոլորը: Ու այդ պատճառով, շատ ակելի մտահոգ եմ:

Լաւ չ'երեւիր ապագայ յարաբերութիւններու ընթացքը: Յաւալի է ու ակելի'ն: Վտանգաւոր է:

Աստուած վերջը բարին ընէ:

